


1.2.5. Տրանսպորտ

**Բեռնափոխադրումներ:** 2004թ. հունվար-ապրիլին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2003թ. հունվար-ապրիլի նկատմամբ նվազել է 2.7%-ով:

Բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2004թ. հունվար-ապրիլ	2004թ. հունվար-ապրիլը 2003թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %	2004թ. ապրիլ	2004թ. ապրիլը մարտի նկատմամբ, %
<b>Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա</b>	<b>1712.3</b>	<b>97.3</b>	<b>494.6</b>	<b>111.9</b>
<i>այդ թվում՝</i>				
<b>Երկաթուղային տրանսպորտով</b>	<b>741.0</b>	<b>121.2</b>	<b>242.0</b>	<b>116.0</b>
<i>որից.</i>				
արտահանվել են բեռներ	111.5	178.4	35.6	116.7
ներկրվել են բեռներ	342.9	131.4	93.3	101.7
ներհանրապետական փոխադրումներ	286.6	99.5	113.1	130.9
<b>ավտոտրանսպորտով</b>	<b>609.1</b>	<b>79.6</b>	<b>186.1</b>	<b>113.3</b>
<i>որից.</i>				
արտահանվել են բեռներ	41.8	196.2	15.0	133.9
ներկրվել են բեռներ	119.6	137.0	36.2	119.5
ներհանրապետական փոխադրումներ	447.7	68.1	134.9	109.9
<b>օդային տրանսպորտով<sup>1</sup></b>	<b>2.6</b>	<b>113.0</b>	<b>0.7</b>	<b>77.8</b>
<i>որից.</i>				
արտահանվել են բեռներ	1.2	171.4	0.3	60.0
ներկրվել են բեռներ	1.4	86.5	0.4	100.0
<b>խողովակաշարային տրանսպորտով</b>	<b>359.6</b>	<b>94.8</b>	<b>65.8</b>	<b>96.5</b>

Բեռնափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտի առանձին տեսակների 2004թ. հունվար-ապրիլին, %



2003թ. հունվար-ապրիլին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտը կազմել է 34.8%, ավտոմոբիլայինը՝ 43.5%, օդայինը՝ 0.1%, խողովակաշարայինը՝ 21.6%:

<sup>1</sup> Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված բեռնափոխադրումները: «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2004թ. հունվար-ապրիլին»

**Երկաթուղային տրանսպորտ:** 2004թ. հունվար-ապրիլին ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2003թ. հունվար-ապրիլի նկատմամբ աճել է 21.5%-ով: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 46.3% (2003թ. հունվար-ապրիլի 42.7%-ի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 15.0% (2003թ. հունվար-ապրիլի 10.2%-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 38.7% (2003թ. հունվար-ապրիլի 47.1%-ի դիմաց):

Ըստ բեռների հիմնական տեսակների, 2004թ. հունվար-ապրիլին 2003թ. հունվար-ապրիլի նկատմամբ քիմիական և հանքային պարարտանյութերի փոխադրման ծավալն ավելացել է 2.4անգամ, սև մետաղներինը՝ 2.1անգամ, հանքային շինարարական նյութերինը՝ 2.1անգամ, անտառային բեռներինը (զերան, փայտանյութեր, ֆաներա և այլն)՝ 81.8%-ով, ցեմենտինը՝ 81.0%-ով, հացահատիկի և աղացվող մթերքինը՝ 51.9%-ով, նավթ և նավթամթերքինը՝ 17.0%-ով: Քարածխի փոխադրման ծավալը նվազել է 66.7%-ով, սև մետաղների ջարդոնինը՝ 20.5%-ով, հանքաքար գունավոր մետաղներինը՝ 10.6%-ով:

Վազոնների միջին օրական բեռնաթափումը 2004թ. հունվար-ապրիլին կազմել է 90 վազոն և 2003թ. հունվար-ապրիլի նկատմամբ ավելացել 14 միավորով, իսկ բեռնումը կազմել է 57 վազոն և ավելացել 6 միավորով: Նույն ժամանակաշրջանում վազոնապտույտը կազմել է 8.1 օր և 2003թ. հունվար-ապրիլի նկատմամբ արագացել է 3.8 օրով:

**Ավտոմոբիլային տրանսպորտ:** 2004թ. հունվար-ապրիլին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը 2003թ. հունվար-ապրիլի ցուցանիշի նկատմամբ նվազել է 20.4%-ով, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 19.6% (2003թ. հունվար-ապրիլի 11.4%-ի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 10.6% (2003թ. հունվար-ապրիլի 7.2%-ի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 6.9% (2003թ. հունվար-ապրիլի 2.8%-ի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 23.4% (2003թ. հունվար-ապրիլի 13.1%-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 73.5% (2003թ. հունվար-ապրիլի 85.8%-ի դիմաց):

**Օդային տրանսպորտ:** 2004թ. հունվար-ապրիլին օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը կազմել է 2.6հազ. տոննա, որը 2003թ. հունվար-ապրիլի նկատմամբ աճել է 13.0%-ով: Հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 53.8% (2003թ. հունվար-ապրիլի 69.6%-ի դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը՝ 46.2% (2003թ. հունվար-ապրիլի 30.4%-ի դիմաց):

**Խողովակաշարային տրանսպորտ:** 2004թ. հունվար-ապրիլին խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն ներկրված բնական գազի բեռնափոխադրումների ծավալը 2003թ. հունվար-ապրիլի ցուցանիշի նկատմամբ նվազել է 5.2%-ով:

**Բեռնաշրջանառություն:** 2004թ. հունվար-ապրիլին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2003թ. հունվար-ապրիլի նկատմամբ աճել է 3.6%-ով:

**Բեռնաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների**


	2004թ. հունվար-ապրիլ	2004թ. հունվար-ապրիլը 2003թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %	2004թ. ապրիլ	2004թ. ապրիլը մարտի նկատմամբ, %
<b>Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը, մլն.տոննա-կմ այդ թվում՝</b>	<b>716.5</b>	<b>103.6</b>	<b>150.9</b>	<b>95.5</b>
Երկաթուղային տրանսպորտով	198.3	124.3	55.6	94.9
ավտոտրանսպորտով	16.1	82.6	3.3	91.7
օդային տրանսպորտով	2.7	142.1	0.6	54.5
խողովակաշարային տրանսպորտով	499.4	97.8	91.4	96.5

**Ուղևորափոխադրումներ:** 2004թ. հունվար-ապրիլին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը 2003թ. հունվար-ապրիլի ցուցանիշի նկատմամբ աճել է 7.0%-ով:

**Ուղևորափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների**

	2004թ. հունվար-ապրիլ	2004թ. հունվար-ապրիլը 2003թ.հունվար-ապրիլի նկատմամբ,%	2004թ. ապրիլ	2004թ. ապրիլը մարտի նկատմամբ,%
<b>Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ այդ թվում՝</b>	<b>58775.5</b>	<b>107.0</b>	<b>15707.5</b>	<b>104.6</b>
Երկաթուղային տրանսպորտով	264.5	81.6	62.4	78.9
ավտոտրանսպորտով	51111.0	109.5	13725.5	107.0
<b>դրից՝</b>				
<i>թեթև մարդատար տաքսիներով</i>	<i>637.6</i>	<i>2.2անգամ</i>	<i>203.5</i>	<i>125.4</i>
օդային տրանսպորտով <sup>1</sup>	269.4	121.4	81.8	120.8
էլեկտրատրանսպորտով	7130.6	92.6	1837.8	90.3

**Ուղևորափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտի առանձին տեսակների 2004թ. հունվար-ապրիլին, %**



<sup>1</sup> Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված ուղևորափոխադրումները:

2003թ. հունվար-ապրիլին ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտինը կազմել է 0.6%, ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 85.0%, օդային տրանսպորտինը՝ 0.4% և էլեկտրատրանսպորտինը՝ 14.0%:

Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների ծավալը, որը 2004թ. հունվար-ապրիլին կազմել է 74.2%, իսկ տրոլեյբուսով՝ 21.5%, տրամվայով՝ 1.5% և ճոպանուղով՝ 2.8%:

**Ուղևորաշրջանառություն:** 2004թ. հունվար-ապրիլին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը 2003թ. հունվար-ապրիլի նկատմամբ աճել է 10.2%-ով:

**Ուղևորաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների**

	2004թ. հունվար-ապրիլ	2004թ. հունվար-ապրիլը 2003թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %	2004թ. ապրիլ	2004թ. ապրիլը մարտի նկատմամբ, %
<b>Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորաշրջանառության ծավալը, մլն. ուղևոր-կմ այդ թվում՝</b>	<b>877.8</b>	<b>110.2</b>	<b>232.5</b>	<b>102.6</b>
երկաթուղային տրանսպորտով	9.3	77.5	2.2	78.6
ավտոտրանսպորտով	625.9	108.0	160.0	100.4
որից՝				
թեթև մարդատար տաքսիներով	4.6	2.3անգամ	1.4	116.7
օդային տրանսպորտով	215.0	123.8	63.2	111.7
էլեկտրատրանսպորտով	27.6	89.0	7.1	89.9

**Տրանսպորտային պատահարներ:** Հանրապետությունում 2004թ. հունվար-ապրիլին ճանապարհատրանսպորտային պատահարները 2003թ. հունվար-ապրիլի նկատմամբ աճել են 38.1%-ով:

**Ճանապարհատրանսպորտային պատահարների ցուցանիշները**

	2004թ. հունվար-ապրիլ	2004թ. հունվար-ապրիլը 2003թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %	2004թ. ապրիլ	2004թ. ապրիլը մարտի նկատմամբ, %
<b>Ճանապարհատրանսպորտային պատահարներ, ընդհանուր</b>	<b>319</b>	<b>138.1</b>	<b>86</b>	<b>102.4</b>
Զոհվել են, մարդ	58	93.5	16	123.1
Վիրավորվել են, մարդ	406	133.6	98	96.1